

82
2-16

910

me up.
me. p-



ՆԱԹ ԲԻՆՔԵՐՓԵՆ

ԱՄԵՐԻԿԱՑԻ ՀՈԶԱԿԱԿՈՐ ԳԱՂՏՆԻ
ՈՍՏԻԿԱՆԻՆ ՆՈՐ ԱՐԿԱԾՆԵՐԸ

ԹԱՐԴՄ. գ. 2.

թիւ 1

ՕՊԽ ՄԵՋ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԵՐԻՆ ՄՁ



53146-42



39755 - 67

Այն պահուն երբ օդապարիկը կը բարձրանար, իրեն ճետ տանելով
չարագործները, թինքէրթըն որ մօնցած էր մէկ ոստումով կառ-
չեցաւ չուսններուն:

ԱՐԴՅՈՒՆ ԶՈՐԴՈՒՐԵ
ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

ՕԴԻՆ ՄԵԶ ԶԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՄԸ

ԶԳԱՅԱՑՈՒՆՑ ՈՃԻՐ ՄԸ

Նիւ Եօրքի ճեղլընթաց կառախումբը, որուն մէջ կը գտնուէր Նայթ Բինքէրթըն, երկու ժամէ ի վեր մեկնած էր Չիքակոյի կայարանէն։ Հոչակաւոր դաղնի սատիկանը այդ քաղաքին սատիկանութեան կողմէ կանչուած էր օդնելու համար իրեն որ ձերբակալէ զողերու և դրամանենդներու խումբ մը։ Բինքէրթըն տեղւոյն վրայ գացած էր և քանի մը ժամ ետք ամբողջ խումբը բանտարկուած էր։ Այս ձերբակալումը իրեն համար խաղ մը միայն եղուծ էր։

Ա. կարգի վակոնի մը մէջ հանգիստ կերպով զետեղուած, գաղտնի սատիկանը կառախումբին երկու կողմը պարզուող գիւղանկարը կը դիտէր։ Ճեղլընթացը շատոնց հեռացած էր Միչիկայի լիճին եղերքներէն, ու արդէն իշրիէ լիճը կը տեսնուէր հեռուէն։ Շատ չանցած, Քլիվէնդ պիտի հասնէին։

Յանկարծ Բինքէրթըն սկսաւ ուշադրութեամբ քան մը դիմել օղին մէջ։ Ուրիշ ճամբորդներ հետեւեցան իր օրինակին և քիչ մը վերջ, կառախումբին բոլոր ուզեւորները յուղումի մատնուեցան։

— Օդապարի՛կ մը . . . , նայեցէք, օդապարի՛կ մը կը պոռային։ Նաւակին մէջ երկու հոգի կայ և տակը, ակամէ՛ք, երրորդ անձ մը կայ, երկար չուանէ մը կախուած։

— Անշուշտ լարախաղաց մըն է։ Այս տեսակ բաներ կը տեսնուին երբեմն բանալիտներուն մէջ, ըստն ճամբորդներէն ոմանք։

— Բայց ո՞չ, դիտել տուաւ ուրիշ մը։ Օդապարիկը բաւական բարձրացած է և լարտխաղացը, — եթէ սառւզիւ լարախաղաց մըն է —, պէտք է սկսէր իր խաղերուն։ Արդ, ամենափոքր շարժում մը չըներ։

Բինքէրթըն մասնակցած չէր այս խօսակցութեան։ Իր

աչքերը աւելի ազէկ և աւելի հեռուն կը տեսնէին քան
միւսները և տեսածը սոսկալի բան մը ըԱւալու էր, դատե-
լով այն արտայացութենէն, որ կը նկարուէր դէմքին վրայ:

Կաշիէ պայուսակը բացաւ և դիտակ մը առնելով աչ-
քին տարաւ: Սարսուռ մը զգաց և մէկ սստումով ոտքի-
եւաւ:

— Վայ անպիտան, պօռաց, եթէ աչքերս չեն խարեր
զիս, հո՞ն, վերը, դարշելի բան մը տեղի կ'ունենայ: Ա՞ն-
տաղակները:

Գաղտնի սստիկանին նշմարածը ստուդիւ սարսափ
պատճառելիք բան էր: Օդապարիկին տոկ, չուանին ծայ-
րէն կախուած մարդը մեռած էր: Դիակ մը եղած էր
այլ ես:

Չուանին ծայրը հագոյց մը կազմած ու անցած էր
զիզին շուրջը տարաբախտ մարդուն, որ անտարակոյս խեղ-
դուած էր այդ կերպով:

Բինքէրթըն վայրկեան մը դիտոց մեռելին ահռելի
կերպով կծկուած դէմքը: Յետոյ քննեց նաւակը, որուն
մէջ երկու հոգի կային: Անոնցմէ մէկը ճիշդ այդ պահուն
նաւակին եղերքին վրայէն ծռած էր և ուշադրութեամբ
կը նայէր դիակին, որ չուանին ծայրը կ'երերար:

Բինքէրթըն խիստ որոշ կերպով տեսաւ զայն: Բարձ-
րահասակ և նիհար մարդ մըն էր, ուեւ մօրուքով: Իսկ
միւսը կրնակը դարձուցած էր և դաղտնի սստիկանը չկրցաւ
անոր դէմքը տեսնել:

Օդապարիկը խիստ մեծ արագութեամբ կը բարձրանար
և Բինքըրթըն հազիւ քանի մը բասէ միջոց ունեցած էր
այս զննութիւնները կատարելու համար երբ օդապարիկը
քշուեցաւ բաւական ուժգին հոսանքէ մը: Շատ չանցած,
խիստ փոքր կէտի մը պէս երեւցաւ հորիզոնին վրայ և
քանի մը վայրկեանէն բոլորովին անհետացաւ:

Գաղտնի սստիկանը նշանակեց օդապարիկին բռնած
ուզութիւնը: Անիկա տարուած էր դէպ ի հիւսիս արեւելք,
այսինքն Ռըչմընդի կողմը:

Մեծանուն սստիկանը կառախումբէն իջաւ: Քլիվէնտ,
անմիջապէս սկսելու համար իր քննութեան:

Քաղաքին մէջ շատ քալելու ոկտօբ չունեցաւ տեսնե-
լու համար որ բուռն յուզում մը կը տիրէր հոն: Ամէն
կողմ ուրիշ բանի վրայ չին խօսեր բայց եթէ օդապարիկին
ու այն ոճիրին վրայ, որուն իրը գործիք ծառայած էր ա-
նիկա: Գաղտնի սստիկանը, առանց այլ ես վարանելու,
մօտեցաւ խումբի մը, ուր կը վիճարանէին ոգեւորութեամբ:

— Ի՞նչ կայ, ի՞նչ պատահեցաւ, հարցուց: Ամբողջ
քաղաքը վրգոված կ'երեի: Օդապարիկի մը բարձրանալուն
խօսքը կը լսեմ: Խնդիրը ի՞նչ բանի վրայ է:

Բնակիչներէն մէկը խօսք տուաւ և կարեւոր երեւոյթ
մը տալով ինքինքին, ըստաւ:

— Ահ, պարո՞ն, ահռելի ոճիր մը գործուեցաւ: Այսօր,
ձիշդ կէս օրուան համար ծանուցուած էր Ուէսթըրլէնտ
եզրայրներուն պատկանող օդապարիկին մեկնումը: Ձիշդ
տաեւնին մեկնեցաւ, բայց երկուքի տեղ երեք ուզեւոր տա-
րաւ: Արդարեւ, օդապարիկին վեր ելած պահուն, հանդի-
ուատեններուն առաջին կարգին վրայ գտնուող մարդ մը:
— որուն տակաւին յայտնի չէ թէ ի՞նչ կերպով հանգոյցի
պէս վիզին շուրջը անցած էր չուանին ծայրը—, վեր տար-
ուեցաւ և հրմա հոն է, նաւակին տակ տակախուած:

— Այդ հանդիսաւենին ով ըլլալը յայտնի է, հարցուց
Բինքըրթին:


— Այս՝, Ուիլերմ Մօրին էր, Քլիվէնդի կեդրոնական
պահքային արկղակալը, որ 50,000 տոլար ունէր վրան:
Աւստի տարակոյս չկայ թէ այդ թշուաւականները անոր
դրամը յափշտակել կ'ուզէին և ես, իմ մասիս...

Բայց արդէն Բինքըրթըն անոր մտիկ չէր ըներ այլ ես:
Շնորհակալութեան քանի մը բառեր մոլտաց և շո՛ւտ շո՛ւտ
հեռացաւ: Մարդը անոր ետեւէն նայեցաւ զարմանքով:

— Ի՞նչ թօնափ մարդ է: մրմուաց: Զեզմէ տեղեկութիւն
կ'ուզէ և տրուած տեղեկութիւնները մինչև վերջը մտիկ ը-
նելու նեղութիւնը յանձն չառնէր: Կարծես թէ այս գործը
չէր չահազրդուեր զինք:

Բինքըրթըն կառաք մը կանչեց:

— Սստիկանութեան պաշտօնատունը, շո՛ւտ:



Քառորդ մը ետքը, անուանի ստիկանը կը մտնէր
Քվալենտի ստիկանութեան քննիչ Մր. Բէթըրունի գրա-
սենեակը:

ՔԱՆԻՉՔ ՊԱՐԺԱԳԱՆ ԹԻԱԳ :

— Մեծանուն պաշտօնակցիս՝ Բինքերթընի այցաքար-
գը բերին ինձի, ըստ։ Եթէ իրաւունէ ի՞նք է որ իմ առջևս
կը գտնուի, խելքս չի համնիր ասոր։ Հինգ վայրկեան շըներ
որ հեռագիր մը զրկեցի իրեն ի նիւ եօրք, ինդքելով որ
հոս զայ գլայացունց ոճիրի մը պատճառաւ։ Հեռագիրը
նոյն խոկ տակաւին չէ զարնուած և ինքը արդէն հոս է։

թիւքէրթըն ժպտեցաւ և քոսրիխն օժռքը աղջուկու ու տասխանեց .

— Այո՛, կը խոստովանիմ թէ ասիկա նախապէս կընայ
արտասովոր երեւալ: Բայց բացարութիւնը շատ պարզ է:
Չիքակոյէն կը դառնայի և վակոնին մէջէն տեսայ Ուէս-
թըրէնս եղբայրներուն օդապարփկը, որ կը բարձրանար
նաւակին տակ գանուած գիտակովը: Ճամբորդութիւնս ընդ-
հատեցի, ի՞նչ ըԱլալ գիտնալու համար: Կարծես թէ այս
տեղ գործ կայ ինծի:

Պատահածը կլուս է - և
— Այս՝ սակայն ճշգրիտ բան մը չեմ զիտեր։ Գիտ-
ցածու սա՛ է միայն որ Ուկաթըըլէնտ եղբայրները խեղդած
և ողին մէջ բարձրացուցած են Քվիվէնտի կեղծրոնական
պանքային արկղակալը, իր՝ վրայ գտնուած 50,000 տուարով
միասին։

Քննիչը երկու քայլ ետ գնաց և այն ատեն Իրնքէրթես
նշմարեց որ երրորդ անձ մը կը գտնուէր սենեկին մէջ:
պատկառելի դէմքով և ծերմակ խոշոշ մորուքով ծերունի
պարոն մըն էր, որ ելաւ աթոռէն, ուր նստած էր ճիշդ
գրասեղանին քովը:

— Թոյլ տուէք, պարոննեկ'ը, որ իրարու ներկարյացնեմ ձեզ, բաւ Բէթըըսըն։ Մր. Ճէյմս Հոլի, անօրէն Քլիվլէնտի կեղբոնական պահքային։ — Մր. Նաթ Բինքըըրթըն, մեր նշանաւոր գաղտնի ոստիկանը։

Ծերունի սպարոնը ձեռքը երկնցուց վարպետին և եւ ռանդով բաւι .

— Անհունապէս ուրախ եմ ձեր գալուն համար, Մր.
Քինքէրթըն: Կը յուսամ թէ ձեր աջակցութեամբ պիտի
կրնանք դժնել և ձերբակալել այդ երկու թշուառականնե-
րը: 50,000 առլարին վրայ այնչափ չեմ ցաւիր որչափ սա
տարաբախտ Ռւիլելմ Մօրիսի վրայ: Պանքան վերջապէս
բաւական հարուստ է և կրնայ այդչափ գումարի մը կո-
րուստին տոկալ: Բայց մեր ամէնէն հաւատարիմ և լաւա-
գոյն պաշտօնեաններէն մէկուն այսքան զարհուրելի կերպով
մեր ձեռքէն խլուրիլը վրէժինդրութիւն կ'աղաղակէ: Այդ
Մօրիսը զաւկիս պէս կը սիրէի և իր սոսկալի վախճանը
շատ վիշտ կը պատճառէ ինծի: Ամենասպնիւ սիրո մը, ա-
մենառողիզ հոգի մը ունէր ու իր պարկեշտութիւնը բնաւ
կասկածի ենթարկուած չէր: Ա'հ, այն որ իրեն ըսեր թէ
թշուառականներ օրին մէկը զինքը պիտի զործածէին կո-
ղապտելու համար այն պանքան, որուն կը ծառայէը հա-
ւատարմօրէն և ուղղամտութեամբ, ոչ միայն զարմոնք
պիտի պատճառէր իրեն, այլ նաև անողորմարար նախատած
պիտի ըլլար զինքը:

Երեք մարդիկը նստան : Բինքը թը լն խօսք առաւ .

— Աւելորդ է ըսել որ պատրաստ եմ այս գործը
ստանձնելու : Կը յուռամ թէ պիտի յաջողինք, վասն զի եր-
կու ուղեւորներով օդապարփկ մը չի կրնար մէկ օրէն միւսը
անհետանալ առանց հետք ձգելու : Հիմա ձեզի քանի մը
հարցումներ պիտի բնեմ, Մր. Հումի :

— Հարցուցէք, պատրաստ եմ պատասխանելու:

— Ի՞նչպէս կ'ըլլայ որ Աւիլեզմ Մօրիս 50,000 տոլար
կ'ունենալ իր վրաւ:

— Այսօր շաբաթ ըլլալուն համար է, պատասխանեց
Ձեզին Հոլիք: Արդ, ամէն արաթ օր այդէափ գումար մը

կը յանձնենք Քուք և որդիք վաճառատան, — որուն բոլոր դրամները մեր քովիք աւանդ թողուած են — գործաւորներուն շաբաթականը վճարելու համար: Ուիլելը Մօրիս միշտ դրամը ինք կը տանէր, ժամը 1ին գուրս ելլելով մեր գրասենեակներէն: Այսօր բացառաբար ժամը 11ուկէսին մեկնած էր, վասն զի կ'ուզէր որ կէս օրին մեկնելիք օդապարփկը տեսնէ:

— Անիրը ի՞նչպէս գործուեցաւ:

— Ուիլելը Մօրիս, բաւ քննիլը, ինք խօսք առնելով, ճիշդ նաւակին քովիք էր: Դիտուեցաւ որ յաճախակի կը խօսէր Աւէսթըրլէնա եղբայրներուն հետ: Մեկնումէն վայրկեան մը առաջ քանիցս սեղմեց անոնց ձեռքը: Քանի մը վայրկեան ետք պատահեցաւ անլուր, անհաւատովի բանը: Երբ կէս օր եղաւ, երկու թշուառականներէն մէկը ու բոշեալ նշանը տուաւ և ամէն կողմէ միենոյն ատեն կը տրուեցան չուանները: Բայց, նոյն պահաւն, Աւէսթըրլէնա եղբայրներէն մէկը վայլակի պէս արագ շարժումով մը, չուանին հանգոյցը նետեց վիզին շուրջը Ուիլելը Մօրիսի, որ դեռ նաւտիին քովիք կը գտնուէր և տարաբախտ մարզը, ինչպինք ազատելու համար ձեռքը վեր առնելու ժամանակ չունեցած, ողին մէջ հանուեցաւ: Ես ինքս տեսայ որ ինզ աղսն քանի մը բոպէ տապակեցաւ, մինչ օդապարփկը կը բարձրանար: Յետոյ շարժում մը չըրաւ այլեւ: Կը կարծեած թէ ողնասիւնը խորտակուած եր ցնցումէն: Գրէթէ կը փողաւիմ իրեն համար մազթելու որ այդպէս եղած ըլլայ, ուրովնետես այն ատեն քիչ պիտի տանջուէր:

Բինքէրթըն պահ մը լուռ մասց: Յետոյ հարցուց.

— Օդապարփկին մեկնելէն վայրկեան մը առաջ, Աւէսթըրլէնա եղբայրներուն հետ Ուիլելը Մօրիսի փոխանակած խօսքերէն յայտնի եղած է թէ զանոնք կը ձանջնար և թէ անոնց հետ ածնչութիւն մը ունէր:

— Այո՛, դիտուած էր ազգէն որ Մօրիս մեր քաղաքին ճաշարաններուն կամ սալօններուն մէջ քանիցս տեսակցած էր երկու օդանաւորդներուն հետ, որ ութ օր առաջ եկած էին Քիվլէնա:

— Այդ երկու անձերուն վրայ որոշ աեղեկութիւն չկա՞յ:

— Ո՛չ: Իրենք պարզապէս ըսին թէ նիւ նօրքէն կուգային և թէ մատղիր էին ցուցադրութիւն մը ընել այստեղ: Նախապէս զարմանք յայտնուեցաւ մուտքի չտփաւոր գինին վրայ, զոր կը պահանջէին հասարակութիւնը ընդունելու համար այն մասնաւոր շրջապատին մէջ, ուր օդապարփկը կ'ուռէցնէին, բայց ետքը հասկցուեցաւ թէ իրենց նպատակն էր սպաննել և կողոպտել մեր տարաբախտ արկղակալաւը:

— Ե՞ս ալ այդպէս կը կարծեմ, բաւ Բինքէնթըրը: Իրենց ծրադիրը ստուգիւ կժոխային նարտարութիւնով մը պատրաստուած էր և կը կասկածիմ որ անոր նմանը զանուի ոժիրներու տարեգրութեանց մէջ: Այդ երկու Աւէսթըրլէնաները, — առժամապէս գործածելով այս անունը, որով կը կոչէն ինքզինքնին —, վարպետ չարագործներ են և շտագմուար պիտի ըլլայ զիրենք ձերբակալեւ:

— Պէտք է սակայն որ ձերբակալուին, պոսաց պանքային տնօրէնը, ոլէտք և ամէն պարագայի մէջ: Հօն զըտնուողներուն համար ի՞նչ յուսախարութիւն պիտի ըլլայ եթէ այդ թշուառականները արդարութեան ձեռքէն խուսափին: Մտածեցէք: Այդ անլուր ոժիրը քանի մը հազար հանգիստէն ո՞չ զիստէներու աշխին առջև գործուի և շերկաններէն ո՞չ մէկը չկրնայ պղտիկ մատը անդամ շարժել այդ ոժիրը արդիւրու համար: Բարկութեան և անէծքի ազագակներ միայն զիստէները արագօրէն կը բարձրանային օդին մէջ և հասողութիւնէ հեռի էին արդէն: Խաղաղօրէն պիտի վայելէն իրենց չարագործութեան պառուզը և արդարութիւնը իրենց ոժիրին հաշիւը պիտի չպահանջէ: Ո՛չ, հազար անդամ ո՞չ: Հանրային կարծիքը պիտի ըմբոստանար:

— Վստահ եղէք թէ կրցածս պիտի ընեմ որպէս զի ացդցաւալի պատահականութիւնը տեղի չունենայ, բաւ Բինքէրթըրը հաստատօրէն: Բայց հարցումներուս կը սկսիմ: Ուիլելը Մօրիս քանի տարեկան էր:

— Յօ տարու, պատասխանեց ձէմս Հոլի:

— Ամուսնացած էր:

— Այս՝, հինգ տարիէ ի վեր:

— Զաւակներ ունէ՞ր:

— Երեք տարեկան մանչ մը ունի:

— Իինը կը ճանչնա՞ք:

— Շատ լաւ կը ճանչնամ, վասն զի յաճախ իմ տունն ճաշած են: Տիկին Մօրիս մէկն է այն շատ սիրուն և հանձնի կիներէն, որոնց հանդիպած ըլլամ երեք: Չեմ համարձակին միտքու բերել իր յուսահատութիւնը:

Բինքէրթըն քննիչին դառնալով հարցուց.

— Սրդէն հարցաքննեցի՞ք Տիկին Մօրիս:

— Ո՞չ, բայց հիմակ ո՞ւր որ է կուգայ: Հարցնել տուի իրեն թէ ո՞ր վայրկեանին կրնայի տեսնել զինքը: Պատասխան վրկեց թէ կէս ժամէն զրասենեակս պիտի ներկայանար:

— Աղէկ մտածէր էք: Կը յուսամ թէ Տիկին Մօրիս պիտի կրնայ տեղեկութիւններ տալ մեզ երկու օդանաւորդներուն վրայ:

Բինքըրթըն հազիւ թէ աւարտած էր այս խօսքերը, Տիկին Էլլինը Մօրիսի ժամանումը ծանուցին: Ներս մտաւ համակ սեւեր հագած և թանձր քօլ մը դրտծ:

Բարձրահասակ և նրբամարմին էր և խիստ աղնուական երեւոյթ մը ունէր: Անսահման յուսահատութիւն մը աւելած էր իր սիրուն դէմքը:

— Տիկին, ըստ Բինքէրթըն յարգանքով, քանի մը հարցումներու ուստասիաննելու չափ զօրաւոր կ'զգա՞ք ինքնինքնիդ: Հարկ է որ կարելի եղածին չափ չուտ տեղեկութիւն ստանամ ձեզ այրիացնող երկու թշուառականներուն վրայ, որպէս զի կարենամ ձերբակալել և արդարութեան յանձնել զանոնք:

Տիկին Մօրիս աչքերը վեր առաւ և խօսակիցին նացաւ:

— Այս՝, Մր. Բինքէրթըն, հարցուցէք, ըստ: Այն վայրկեանէն ուր այլես ողջ պիտի չտեսնեմ իմ հէք սիրելի ամուսինս, մէ՛կ փափաք, մէ՛կ նպատակ միայն ունիմ, — տեսնել որ իրենց արժանի պատիմը ստացած ըլլան այս անունի ոնիրը գործող աւազակները:

— Կ'ապահովեմ ձեզ թէ իմ մասիս բան մը զանց պիտի լընեմ տառը համար:

Տիկինը զսպեց հեծկլտուքները, որոնք մինչեւ կոկորդը կ'ելլէին և երեք մարդոց համար անկարելի եղաւ խորապէս շյուզուիլ տեսնելով անոր ջանքերը, զորս սովորուած էր ընել իր վիշտը յայտնի չընելու համար:

Յնուանի սստիկանը պահ մը սպասեց, ժամանակ տալու համար անոր որ ինքզինքը զանէ: Յետոյ հարցուց.

— Պանքային տնօրէն Մր. Հոլի արդէն փափաքուած բոլոր տեղեկութիւնները տուաւ ձեր տարաբախտ ամուսնոյն վրայ: Ձեզմէ հաօկնալ կ'ուզեմ թէ Ուէսթըրլէնտ եղբայրներուն հետ ի՞նչ յարաբերութիւններ ունէր:

— Չեմ զիտեր: Ի՞նչ կրնամ ըսել ձեզի:

— Գոնէ քանի մը մանրամասնութիւններ զիտնալու էք սակայն: Ուէսթըրլէնտ անունը առնող երկու անձերը շաբաթէ մը ի վեր Քլիվլէնտ եկած էին. այսպէս չէ:

— Չեմ զիտեր թէ ո՞ր թուականէն ի վեր հաս էին: Սա միայն կրնամ ըսել ձեզի թէ իր շաբաթ մը առաջ Ոէիլ-երմ իրիկուն մը տուն եկաւ այդ երկու մարդոցմէ մէկուն հետ, զոր ինծի ներկայացուց Հերրի Ուէսթըրլէնտ անուցով և հրաւիրեց որ ճաշը մեզի հետ ընէ: Առաջին վայրկեանէն խորին հակակրութիւն մը զգացի այդ օտարականին հանդէպ: Իր մուայլ ակնարկը, իր սեւ խոշոր մօրուքը, իր կեղծաւոր զէմքը անյաղթելի նողկանք մը պատճառեցին ինծի: Աւա՛զ, հիմա կը հասկնամ թէ ինչո՞ւ առաջին սեսած օրս այդպիսի տպաւորութիւն մը զգացի և կ'ուզէի...

Զկրցաւ լմիցնել: Հեծկլտուքները մարեցին ձայնը:

Բինքէրթըն լռեց, յարդելով խեղճ կնոջ արդարացի վիշտը: Յետոյ, երբ տեսաւ թէ քիչ մը աւելի հանդարտած է, փորձեց քիչ մը սիրտ տալ անոր, խոստանալով բան մը զանց չընել իր ամուսնին սպանիչները գտնելու համար:

— Կրնայի՞ք ճշդիւ յիշել թէ Հերրի Ուէսթըրլէնտ ո՞ր օր ձեր տունը եկաւ, հարցուց:

Տիկին Մօրիս պատասխանելէ առաջ պահ մը մտածեց:

— Անցած շաբաթ օր էր, ըստ:

— Իսել է թէ ճիշդ ութ օր է:

— Այս', ըսաւ քննիչն ալ իր կարգին, ճիշդ այս շաբաթ օր էր որ Ռւէսթըրլէնտ եղբայրները հոս եկան: Ես շատ ճշդիւ զիտեմ:

Բինքէրթըն գլուխը երեցուց:

— Այս ամէնէն ուրեմն կը ճետէի թէ, ըսաւ, կամ Մօրիս արդէն առաջուրնէ կը ճանչնար այդ երկու անձերը և կամ թէ անոնք բաւական զօրաւոր յանձնարարական մը քերած էին և առոր ճամար էր որ ձեր ամուսինը տռանց վարանելու կ'ընդունէր զանոնք իր տունը և կը յաճախէր անոնց:

Տիկին Մօրիս խորունկ մտածումներու մէջ թաղուեցաւ: Յանկարծ ցնցուեցաւ:

— Չեմ զիտեր, ըսաւ, բայց կը կարծեմ թէ այս վերջին ենթադրութիւնը ճիշդ ըլլալու է: Միայն թէ ազէկ չեմ յիշեր..., գլուխս իմս չէ..., այլ ևս չեմ կրնար...

Եւ ճէք կինը աթոռին վրայ ինկաւ, կիսովին նուազած: Մեռելի պէս տժգունած էր և աչքերը կը դոցուէին իր կաթքին հակառակ:

Բինքէրթըն քննիչին դարձաւ ու ցած ձայնով ըսաւ:

— Դաւաթ մը զինի բերել տուէք այս կնոջ որպէս զի ոյժ առնէ: Բացարձակապէս պէտք է որ հարցաքննութիւնն շարունակէմ:

Քննիչ Բէթէրսըն անմիջապէս հարկ եղած հրամանները տուաւ և երբ Տիկին Մօրիս քանի մը ումատ ընտիր զինի խմեց, ոյժը վերստացաւ և ի՞նք ինդրեց Բինքէրթընէն որ շարունակէ իր հարցումները:

— Քիչ մը առաջ կ'ըսէիք, Տիկին Մօրիս, թէ այդ երկու անձերը, ձեր կարծիքով, յանձնարարական նամակներ ունեցած ըլլալու էին ձեր ամուսինին մօտ, այնպէս չէ՞:

Տիկին Մօրիս երկու ձեռքերը ճակտին տարաւ և չանց յիշողութիւնը ամփոփել:

Պահ մը խորհելէ ետք ցած ձայնով պատասխանեց.

— Այս', ճիմա կը յիշեմ: Նոյն իսկ այս մասին վէճ մը ունեցանք, — առաջին վէճը՝ մեր ամուսնական ի վեր — :

Զէի ուզէր որ այնչափ հաճոյակատարութիւն ցոյց տար հանդէպ այդ Հէրրի Ռւէսթըրլէնդի, որ առաջին վայրկեանէն հակակրութիւն ներշնչած էր ինծի: Իմ տեսակէտս շծածկեցի Ռւէիլերմէն, որ բարկացաւ և պատասխանեց ինծի թէ այդ Ռւէսթըրլէնար միծ արժանիք ունեցող անձ մըն էր: Որ իրեն ներկայացած էր յանձնարարական ամենավերմագին նամակովը ձօն Թէյլըրի, իր լաւագոյն մէկ բարեկամին, որ Զիքակօ կը ընակի ու այդ թուականին ճամբորդութիւն կը կատարէր լեռան մէջ:

Նաթ Բինքէրթըն խիստ շահազրգուեցաւ այս յայտնութենէն:

— Ո՞վ է այդ ձօն Թէյլըրը, հարցուց.

— Բօի արդէն, ամուսինիս լուագոյն բարեկամներէն մէկը: Փաստաբան է Զիքակոյի մէջ: Կատարեալ պարկեշտ ժարդ մըն է, աւելցուց ոգեւորութեամբ, որպէս թէ Կ'ուզէքէր առաջուրնէ պաշտպանել իր ամուսինին բարեկամը աւագակներուն հետ մեղսակցութեան ամէն կասկածի դէմ:

— Ես ալ ձեզի չափ համոզուած եմ առոր, պատասխանեց զալոնի ոստիկանը հանգարաբէն: Կ'ըսէք ուրեմն թէ ձօն Թէյլըր ձեր ամուսինին մտերիմ բարեկամն էր: Անշուշտ յաճախ կը թղթակցէին իրարու հետ:

— Ամէն շարթու նամակ կը զրէին իրարու: Շատ կը սիրէին զիրար: Իրենց մանկութենէն ի վեր կը ճանչնային և կը սիրէին մէկզմէկ:

— Ձօն Թէյլըրի կողմէ ձեր ամուսինին զրուած նամակները կը կարգայիք:

— Այս', միշտ շատ սիրալիր էին:

— Արդեօք իր վերջին նամակին մէջ կը ծանուցանէր ձեր ամուսինին թէ մտադիր էր ճամբորդութիւն մը կատարէլ լեռներուն մէջ:

— Ո՞չ:

— Եեւնէն զրկուած նամակ մը, թղթատամական քարդ մը չուացա՞ք իրմէ:

Ո՞չ:

— Ռւըրեմն պիտի եղբակացնենք թէ Հէրրի Ռւէսթըրլէնու

ի՞նք տեղեկացուցած է ձեր ամուսինին թէ իր բարեկամը լեռներու մէջ կը ճամբորդէ :

Հաւանական է, սկատասիանեց կինը յողնած և անտարբեր շեշտով մը :

Այս բոլոր հարցումներուն նպատակը չէր հասկնար :

— Անցած շարթու Զիքակոյէն նամակ չղրկեց ձեզի :

— Ո՞չ :

Դավանի ոսափկանը վայրկեան մը լուս մնաց : Կը խորհրդածէր և իր խորհրդածութիւններուն արդիւնքը գոհացուցիչ ըլլալու էր, վասն զի աննշմարելի ժաղիտ մը անցաւ շրթունքին վրայէն :

— Ըստ է թէ, շարունակեց, եթէ աղէկ հասկցայ, Հերրի Ռւէսթըրէնտ այս մէկ այցելութիւնը տուաւ ձեզի, այնպէս չէ :

— Ռւրիշ ատեն չեկաւ : Ամուսինս անգամ մըն ալ տուն չըերաւ զայն, քանի որ չէի կրնար հանդուրժել այդ անձին ներկայութեանը : Ռւստի սրճարանին կամ գինետունին մէջ տեսած ըլլալու ևն զիրար :

— Ռւէսթըրէնտ եղբայրներուն միւսը բնաւ չուսա՞ք :

— Ո՞չ :

— Այս առառու, երբ ձեր ամուսինը պանքսն գնաց կը միամիտ մը նշմարեցի՞ք իր վրայ :

— Ո՞չ : Բնդհակառակը շատ զուարթ էր : Մեկնած պահուն սովորականին պէս ողջագուրեց զիս : Յետոյ ըստ թէ Ռւէսթըրէնտէն պիտի ազատէի, քանի որ նոյն օրը օդապարիկով պիտի մեկնէր : Աւելցուց թէ օդանաւորդը իրեն խօսք տուած էր անգամ մը իրեն ենտ տանիլ զինք և հիմակուլնէ կ'ուրախանար տղու մը պէս :

Խեղճ կինը դարձեալ յուսահատութեան նոսկայի մը ենթարկուելով, հեծկլուաց և աթոռին վրայ ինկաւ :

Բինքըրթըն ոտքի ելաւ :

— Տիկին Մօրիս, ա'լ ուրիշ հարցնելիք չունիմ, ըստ :

Այսուհետեւ այլես անհանգիստ պիտի չընեմ ձեզ այս ցաւալի դործին առթիւ : Անմիջապէս դործի պիտի սկսիմ և հաստատապէս կը յուսամ թէ պիտի կրնամ շուտով արդարութեան յանձնել այդ երկու թշուառականները :

Պանքային անօրէնը թեւը ներկայացուց դժբախտ կնոջ, մինչեւ իր կառքը առաջնորդելու համար զայն :

Քննիչը առանձին մնաց մեծանուն ոստիկանին հետ Անօր երեսը նայեցաւ յուսաբեկ երեւոյթով մը :

— Դործը զէշ կերպով կը ներկայանայ, այնպէս չէ : Մը, Փինքէրթըն, ըստ : Մեծ յոյս մը չունիմ որ ձեռք անպնինք այդ երկու չարագործները, եթէ սակայն վար իջած ատենինին չձերբակալուին : Արդէն ամէն կողմ հեռագրեցի և համոզուած եմ թէ այս ժամուս, բովանդակ հիւսիսային Ամերիկայի մէջ և հարաւային Ամերիկայի մեծ մասին մէջ հաղարաւոր անձեր իրենց աչքերը դէպ ի երկինք վերցուցած են, չանալով այնտեղ նշմարել ոճրագործները և իրենց զոհը կրող օդապարիկը :

— Բէ՛ն, ես տառը վրայ մեծ յոյս մը չունիմ : Ամերիկայի մէջ բոլորովին ամայի և անմարդաբնուկ այնչափ գաւառներ կան որ իրենց համար դժուար պիտի չըլլայ իջնել ազնպիսի տեղ մը, ուր ձերբակալուելու վախ չունենան : Ես համոզուած եմ թէ այդ թշուառականները տմենայետին մանրամասնութիւններովը պատրաստած են իրենց ծրագիրը և թէ վար իջնելու խնդիրը մէկն է անոնցմէ, զորս ուսումնասիրած ըլլալու են ամենամեծ խնամքով : Մինչեւ մութը կոխած ատեն օդին մէջ սլիմի մնան : Յետոյ, մթութեան չնորիւ, պիտի իջնեն առանց նշմարուելու :

— Ես ալ այնպէս կը կարծեմ, ըստ քննիչը, և շատ կը վախնամ որ այդ երկու չարագործները վերջնապէս պիտի խուսափին մեր ձեռքէն : Դուք ալ այնպէս կը կարծէք, չէ : Ա՛ն, եթէ անլուծելի զործ մը կայ, ճիշդ ա'յս է : Խոսուն վանեցէք, Մը, Բինքըրթըն, թէ տակաւին այսպիսի կատութեան մը մէջ զանուած չէք բնաւ :

Բինքըրթըն ժամուցաւ :

— Իրաւունք ունիք, ըստ : Այս կարգի առաջին ոճին է, զոր կը տեսնեմ : Բայց ասիկա պատճառ մը աւելի է որ Հանքերս կրկնապատճեմ : Սիրելի քննիչս, այդ աւտզակները ձեռք ձգելու յոյը բնաւ կորսնցուցած չեմ տակաւին :

Քննիչը բաւական զարմացաւ գաղտնի ոստիկանին այս ապահովութեանը վրայ և չծածկեց իր զարմանքը :

— Իրաւ որ, Մր. Քինքերթըն, ըսաւ, եթէ այս բանը ընէք, աշխարհի ամէնէն մեծ հանճարն էք ու այլեւս կը մնայ յետին ծայր խսնարհիլ ձեր առջեւ։ Ես իմ մասիս, կը խօսավանիմ իմ անկարողութիւնո, իսկ դուք վերջնական յաջողութեան վրայ յուսալից կ'երեւաք։ Ես բան մը չեմ հասկնար կ'աղաջեմ, ուրիշէ կ'ուզէք սկսիլ ձեր հետապութիւնները։

— Նախ ձօն Թէյլըրը պիտի հարցաքննեմ։

Քննիչը չկրցաւ զսպիլ մպիտը։

— Ձօն Թէյլըր։ Ո՞ւր պիտի գտնէք։ Լերա՞ն մէջ։ Ասիկա շատ անորոշ բան մըն է։

Քինքերթըն յօնքերը չպոսոեց և հանդարտօրէն ուսասասիանեց։

— Կը հաւաստեմ ձեզ թէ բնաւ փափաք չունիմ լեռները երթալու։ Անհանգիստ ըլլալու պէտք ալ պիտի չունենամ, վասն զի եթէ ձօն Թէյլըր այս իրիկուն հոս չըլլայ, անշուշտ վաղը պիտի գայ։

Փէթէրսին այս անգամ բալորովին առկեցաւ մնաց։

— Ի՞նչպէս կրնաք գիտնալ թէ վաղը պիտի գայ, ըսաւ։ Եթէ լեռներուն մէջ է, ճամբորդութիւնը այդքան շուտով չըլլար։ Ասկէ զատ, այդ շրջանակներուն մէջ լուրերը շուտով չեն հասնիր և հիմակ անշուշտ տակաւին չի զիտեր թէ ի՞նչ պատահած է։

— Տէր Ասոււած, բացատրութիւնը՝ շատ պարզ է։ Լեռը չի գտնուիր։ Ահա այսչափ։

Քննիչը զլուխը երերցուց։ Փինքըրթընի վճռական հաւաստումները զարմանքէ զարմանք։ Կը զլուրէին զինքը։

— Տարակոյս չկայ թէ, շարունակեց զաղանի ոստիկանը, ճամբորդութեան այս պատմութիւնը բոլորովին շինծու էր։ Երկու աւազակները ձօն Թէյլըրի կողմէ դրուած յանձնարարական նամակ մը ձեռք անցուցած են, չեմ զիտեր ի՞նչ կերպով, կամ թէ, ի հարկին, իրենք շինած են կեղծ նամակ մը։ Հոս գալերնուն պէս հաւացուցած են դժբախտ Մօրիսի թէ իր բարեկամը կը ճամբորդէր։ Իրենց նպատակն էր թոյլ չտալ որ Թէյլըրի նամակ գրէր։

— Այս՛, իրաւունք ունիք, այդպէս եղած ըլլալու է։ ըսաւ քննիչը։ Ասիկա լոյսի պէս պայծառ կ'երեւայ հիմա ինծի։ Աս միայն չեմ երնար հասկնալ թէ ձօն Թէյլըր ինչո՞ւ այս շարթու նամակ չէ գրած Զիքակոյէն, ինչպէս կ'ընէր սովորաբար։

— Վասն զի այդ երկու չարագործները բաւական ճարտար եղած են ո՞ւեւ է վարպետութիւնով մը թոյլ չտալու համար որ նամակ զրէ իր բարեկամին։

— Է՞ս՛, թող այնպէս ըլլայ։ Բայց այն ատեն ի՞նչ պուտ պիտի ունենայ զինքը հարցաքննելի։ Այս բանը չէ որ յանցաւորներուն հետքին վրայ պիտի դնէ մեզ։

— Ես ձեզի չափ համոզուած չեմ այդ բանին, պատասխանեց գաղանի ոստիկանը։ Շատ կարելի է որ Թէյլըր ո՞ւեւ է կերպով յարաբերութեան մէջ եղած ըլլայ այդ երկու թշուառականներուն կամ զոնէ անոնցմէ մէկուն հետ, որով պիտի կրնայ որոշ տեղեկութիւն մը տալ մեզի։ Նոյն առիթով թերեւս պիտի գիտնանք նաեւ այդ մարդոց բուն անունը, վասն զի դուք ալ ինծի պէս կ'ենթաղէք թէ Ռւէսթըրլէնա անունը կեղծ անուն մըն էր, — այնչափ կեղծ որչափ իրենց գործածած խոշոր մօրուքները։

— Ջեր բոլոր ըսածները կ'ընդունիմ, պատասխանեց քննիչը, բայց ի՞նչ օգուտ պիտի քաղենք։ Ասով չէ որ պիտի կրնանք ձեռք անցընել չարագործները։

— Եերեցէք, պատասխանեց Բինքըրթըն խորունկ համազումի մը շեշտովք։ Ամէն պատճառ ունիմ խորհելու թէ այդ երկու թշուառականները արհեստով ոճարագործներ են, որոնց վրայ ոստիկանութիւնը արդէն նախագոյն տեղեկութիւններ ունի։ Այս պայմաններուն մէջ շատ դիւրին պիտի ըլլայ բունել զիրենք։ Մանաւանդ եթէ այն ստահակներն են, որոնց հետ ատենօք գործ ունեցած եմ արդէն, մէկի դէմ հաղար գրաւ կը դնեմ որ ձեռքէս պիտի չազատին։

— Կը կարծէ՞ք թէ օդապարիկին դործը նորէն պիտի փորձեն, հարցուց քննիչը։

— Շատ կասկածելի է, ըսաւ գաղանի ոստիկանը։ Հիմա ձեռքերնին բաւական զրամ ունին և զոնէ առ այժմ պիտի

զգուշանան իրենց հարուածը կրկնելէ, վասն զի այս անդամ կրնայ իրենց համար շատ զէշ դարձուածք մը առնել:

— Համամիտ եմ ձեզի, ըստ քննիչը:

— Հակառակ ամէն բանի և գործը ո՞րչափ ալ դժուարին ըլլայ, կը յուսամ թէ դարձեալ պիտի յաջողինք, աւարտեց Բինքերթըն:

Նոյն պահուն դուռը բացուեցաւ և հեռադրի ցրուիչը ներս մտնելով, քննիչին յանձնեց հեռազիր մը, զոր տնիկա շուտով բացաւ ու կարդաց բարձր ձայնով, Քլիվլենտի հարաւ արեւելակողմէն տառը մղոն հեռու գտնուան փոքրիկ վայրէ մը կուգար և սա բառերը կը պարունակէր.

«Օդապարիկով վեր հանուած արկղսկալ Մօրիսի մարմինը հոս, մօտերը, բաց դաշտի վրայ ինկաւ երր Աւէլսթըրլէնտ եղբայրները կը փորձէին նաւակին մէջ առնել զայն: Մօրիս տակաւին իր վրայ կը կրէ ամբողջ դրամը: Կը սպասեմ ձեր հրամաններուն

իլլինեթլու»

Բինքերթըն անմիջապէս ոտքի ելաւ:

— Զեւքերնի՛ս են, պոռաց մեծ ուրախութեամբ: Այս անդամ պիտի չաղատին: Հիմտ որ իրենց հարուածը վրիպեցաւ առաջին անդամ, քանի որ դիմուլ վար ճգեցին իր վայ գտնուած դրամով մէկտեղ, անշուշտ պիտի փորձեն վերսկսիլ ուրիշ տեղ, հաւանաբար շատ հեռուն: Բայց դարձեալ,— եթէ Մ. Նահանգներու ամենափոքր ծակին մէջ գործեն—, պիտի գտնեմ զանոնք: Դրաւ կը դնեմ որ առ առաւելն ութ օրէն երկու ապիրատները բանտր պիտի ըլլան:

ԱՊԱՀՈՎ ՀԵՏՔԸ

Նաթ Բինքերթըն յանձնաբարած էր Տիկին Մօրիսի որ ձօն Թէյլը Քլիվլենտ հասնելուն պէս իրեն զրկէր: Մեծանուն ոստիկանը այս անդամ ալ սիրալած չէր իր նախատեսութիւններուն մէջ: Արդարեւ, յաջորդ օրը, փաստաբանը Զիքակոյէն վազած ելու խորապէս տիսրած:

Զոհին ամէնէն մտերիմ բարեկամն էր և երր լրագիր-ներէն իմացաւ տարաբախստ Ուիլելմի եղերական վախճանը, անհուն վիշտ մը զգաց:

Անմիջապէս Քլիվլենտ եկաւ յուսահատ այրին միմիթարելու և ի հարկին օգնելու համար անոր: Հարկ էր նաեւ պէտք եղած ձեռնարկները ընել յուղարկաւորութեան համար: Արդարեւ արկղակալին մարմինը մինչեւ Քլիվլենտ փախաղրուած էր այն փոքր քաղաքէն, որուն մօտ ինկած էր և վրան գտնուած դրամը պանքային դարձուած էր:

Բինքերթըն ոստիկանութեան քննիչին գրասենեակը կը գտնուէր երր ձօն Թէյլը ներս մտաւ:


Գաղտնի ոստիկանը խսկոյն յառաջացաւ դէպի ի փառաբանը և ձեռքը անոր երկնցուց:

— Բարի եկաք, Մր. Թէյլը, ըստ: Կը յուսամ թէ մէծապէս պիտի օգնէք մեզի ձեր դժբակատ բարեկամին գործին մէջ:

Փառաբանը կարծ հասակով, անկեզծ և համակրելի ակնարկով և խիստ հաճելի դէմքով մարդ մըն էր: Խորապէս ընկնծուած կ'երեւէր: Գլուխը երերցուց և վհատ շեշտով մը պատասխանեց:

— Աւա՛զ, շատ կը կառկածիմ որ կարենամ օղնութիւն մը ընել ձեզի: Եատ կը վախնամ որ իմ հէք բարեկամիս մահուան վրէմը պիտի չլուծուի երւեք: Եւ սակայն կ'երգնում ձեզի թէ իմ ամբողջ հարստութիւնս սիրայօժար պիտի տայի եթէ կարենայի գտնել յանցաւորները: Հէք և սիրեցեալ բարեկամ: Ի՞նչ սոսկալի վախճան: Միխթարութիւն պիտի չզտնեմ: Տասնըհինգ օր առաջ, երբ գողերը իմ տունս մտան և ունեցածիս մէկ քառորդը յափշտակեցին, մաքէտ չէի անցըներ թէ շատ չանցած, աւելի անողորմ հարուած մը պիտի իջնէր զլիսուս: Կը կարմրիմ երբ կը խօրհիմ հիմակ այն սնոտի յուսահատութեան վրայ, զոր ունեցայ այդ պահուն: Այդ կորուսոր ի՞նչ էր այն միւս կորուստին քով, Պոր կրեցի: Դրամը նորէն տեղը կուգայ և յետոյ կարելի է զանց ընել զայն: Բայց Մօրիսի պէս բարեկամ մը...:

Գաղտնի ոստիկանը հրաւիրեց փաստաբանը որ նստի:



Յետոյ ինք ալ անոր գէմը նստաւ և համդարտօրէն ըստաւ։
— Մը . թէյլը , ձեր վշտին վրայ անշուշտ մեծ զար-
մանք մը պիտի աւելցնեմ , իմացնելով ձեզի թէ դուք այս
գործին խառնուած էք : Արդարեւ մարդասպանները ձեր
անունը գործածած են իրենց հարուածը ի գործ դնելու
համար :

Կարճահասակ փաստաբանը ոստում մը ըրաւ։ Դեփ գեղին կարած էր։

— Բայց անկարելի է, պոռաց ինքնիրմէ դուրս ելած
վիճակի մէջ։ Եթէ ձեր ըստից ճիշդ է, խենթենալը բան
մը չէ։

— Հանդարտեցէք, Մր. Թէյլը: Անհրաժեշտ է որ ձեր
պազարիւնութիւնը պահէք այս միջոցին: Աղէկ մտիկ ըրէք
ինծի: Անցած գարձածը պիտի բացատրեմ ձեզի: Երկու մար-
դասպաններէն մէկը, այն որ Հէրրի Ռեէսթըրէնտ կ'անուա-
նէր ինքզինքը, ձեր ձեռքովը գրուած յանձնարարական նա-
մակ մը յանձնեց Ռեէթերմ Մօրիսի:

Դաղստնի ոստիկանը գրագանին մէջ վնասոեց և զուրս
հանեց Մօրիսի դիմակին վրայէն դանուած նամակը՝ որուն
մէջ ծօն թէլլը զերմագին խօսքերով իր բարեկամին կը
յանձնաբարելը Ուէսթըրլէնս եղբայրները:

Հաղիւթէ փաստաբանը ակնարկ մը ձգած էր թուղթին
Հաղիւթէ փաստաբանը ակնարկ մը ձգած էր թուղթին

— Բայց ասիկա իմ գիրո չէ՝ պոռաց։ Այս նամակը ես
զրած չեմ։ Իրաւ է թէ շատ աղջկ նմանցուած է և կարելի
է ուեռաւ խաբուիլ։

— Ես աւ ճիշդ այդպես կը մտածեի, բայց Ի՞նքը թշուածութեան

Հանդարտորէն : Հակառակը անբացատրով պիտի ըմբռ
— թէլլը սենեակին մէջ կ'երթեւեկէր յուզումով :
Յանկաբծ կեցաւ ու պոռաց .

Քննիչը չկրցաւ զարմանքի ազազակ մը զսպել:

— Ո՞ն, Մր. Փինքը թշնամու ասիկա այլեւս ճարապառութիւն չէ, հանձա՞ր է, ըստու։ Պարոնին հիմակուան ըստածը դուք կէտ առ կէտ յայտնած էիք ինձի։ Ա՞ն, հիմա կը հաւասար թէ ձեռք պիտի անցընենք այդ ապիքատները։

Փինքէրթըն ժպանցաւ ու դարձեաւ թէլլըրին կողմը
դարձաւ :

— Այդ ամէնէն կը հետեւի թէ, ըստու, Ուրիշեցմ Մօրիսի և ձեր գիրը ձեռք անցուցեր են այդ մարդիկը։ Արդարեւ երկու զիրերն ալ նմանցուած են ու յապիսի կատարելութիւնով մը որ անկարելի է ենթադրել թէ իրենց աչքին աղջեւ նմայշ մը ունեցած չեն։ Միւս կողմէ պէտք է նաև որ Մօրիսի հետ ձեր մշակած բարեկամական յարտրերութիւններուն տեղեակ եղած ըլլան։ Ինծի կուզայ որ ահաւասիկ ասիկա պէտք է սահմանափակէ հետազօտութիւններու զետինը։ Հիմա մտածեցէք։ Զիքակոյի մէջ կը ճանչնաց անձեր, որոնց հետ զործ ունեցած ըլլաք ձեր կեանքին մէջ ո՞ւ է ատեն մը և զորս կարող նկատէք այսպիսի ոճիր մը ուսնալու և գործադրելու։

— Ամենեւի՞ն, սպատամիանեց թէլլըր: Յաճախորդներու չեն զիտեր թէ ի՞նչ յարաբերութեան մէջ էի այդ խեղճ Մօրիսին հետ: Եւ յետոյ, անոնցմէ ո՞չ մէկը չի կրնար այս տեսակ կասկածի մը առարկայ ըլլաւ:

— Աղէկ մտածեցէք, Մր. Թէլլը: Յաճախ կարգ մը
անուններ նախապէս կը խուսափին մեր ուշադրութենէն:
Կրնայ Ըլլակ որ իմ ըստ մարդոց հանդիպած Ըլլաք ա՛յն-
պիսի պարագաներու մէջ, որոնք առ այժմ ձեր միտքը չեն
դար: Աղէք մնառեցէք:

Փաստաբանը ձեռքիրուն մէջ առաւ գլուխը ու երկարորէն մտածեց, բայց ի զուր: Գլուխը երերցուց վհատ երեւոյթով մը:

— Աչ, Մր. Փինքէրթըն, միտքո չի գար, ըստու : Եւ
յետոյ, ինչ հարկ կայ որ զլուխո ճաթեցնեմ աշովէս : Ծառ
աղէկ գիտեմ որ երբեք յարաքերութիւն ունեցած չեմ ո՛եւէ
մէկու հետ, որմէ կարելի ըլլայ կասկածիլ թէ մասնակցած
է այս ահաելի ոճքին :

Գաղտնի ոստիկանը, գլուխը ծոած, ինք ալ խորին մտածումներու մէջ թազուած կ'երեւէր, այնպէս որ լոռութիւն մը տիրեց քանի մը վայրկեանի չափ: Յանկարծ Փինքէրթըն ձեռքը ճակտին զարնելով պոռաց.

— Ահ, զտայ: Թիչ մը առաջ չըսի՞ք թէ խորտակումով գողութիւն մը տեղի ունեցած էր ձեր տունը, առկէ 15 օր առաջ:

— Այս:

— Ճշդութեամբ թոււեցէք ի՞նչ որ գողցած էին ձեզմէ:

— Գողերը խորտակեցին զրասենեակիս զրամարկլը և առին երկու փոքր արկղներ, որոնց մէկը 10000 տոլար կը պարունակէր և միւսը՝ թուղթեր:

— Ի՞նչ թուղթեր էին անոնք:

— Դլաւորապէս դործի թուղթեր, բայց նաեւ անձնական նամակներ:

— Վաստահ եմ թէ անոնց մէջ ձեր բարեկամ Ռւիլերը Մօրիսի նամակներն ալ կային:

— Բայց իրաւունք ունիք, պոռաց Թէյլըր: Ահաւասիկ այս անգամ բացատրուեցաւ: Այս պատմութիւնը ապահովապէս կնճռոտ հանգոյց մը կը դառնայ հետզհետէ:

Գաղտնի ոստիկանը փաստաբանին երեսը նայեցաւ ժըպտելով:

— Ամենեւի՞ն. Մը. Թէյլըր. ըսաւ: Ես ընդհակառակը համոզուած եմ թէ հիմա կը մօտենանք լուծումին: Ինձ համար այլեւս ամենափոքր ատրակոյս մը չկայ: Հէք Մօրիսը սպաննող թշուառականները ճիշդ անոնք են որ ձեր դրամն ու թուղթերը գողցան: Զեր նամակները կարդալով տեղեկացան Մօրիսի հետ ձեր յարաբերութիւններուն և այդ տեղեկութիւնը գործածեցին սոսկալի կերպով, ինչու որ գիտէք:

Թէյլըր պատասխան չը տուաւ այլեւս ու ճակտին վրայ փայլող քրտինքը սրբեց:

— Ճեղի հետ գտնուող մարդ մը վարմանքէ վարմանք կը գլուխի, Մը. Փինքէրթըն, ըսաւ քննիչը: Ճիշդը ըսելով չեմ գիտեր այլեւս թէ ի՞նչ ըսեմ, ի՞նչ մտածեմ: Ռւրեմն կը արծէք թէ պիտի կընա՞ք ձեւ Ա. Պուհու սաանեները:

— Անշուշտ: Անմիջապէս Զիքակօ պիտի երթամ 15 օր առաջ գործուած այդ գողութեան ինդիրը ձեռք առնելու և տեղւոյն վրայ քննութիւն մը կատարելու համար: Ազէկ լուսակի էի ձեղի թէ յանցաւորները ապահովապէս ոստիկանութեան կողմէ ճանչցուած և արդէն իսկ անոր հետ գործ ունեցած ոճագործներ են: Բայց կ'ուղեմ զիտնալ — եւ կը յոււամ թէ Մը. Թէյլըրի տան մէջ զտնելիք հետքերու այդ մասին տեղեկութիւն պիտի տան ինձի —, կ'ուղեմ զիտնալ թէ գաղտնի ոստիկանի ասպարէզին մէջ տակաւին ընաւ գործ ունեցած չե՞մ այդ չարագործներուն հետ:

ՍԵՒԱՄՈՐԹ ՖՐԱՆՑ

Երկու ժամ ետքը, Փինքէրթըն, որուն կ'ընկերանար փաստաբան Թէյլըր, Զիքակոյի ճեղնթացին մէջ կը գտնուէր:

Ինչու ըսած էր, մտադիր էր տեղւոյն վրայ կրկնել ոստիկանութեան ապարդիւն մնացած քննութիւնը և մեծ յոյս ունէր գտնել այնպիսի հետքեր, որոնց շնորհիւ պիտի կրնար յանցաւորները ձեռք անցընել:

Հիմակունիմա մտքին առջեւ կը բերեր այն բոլոր ոճագործները, որոնց հետ գործ ունեցած էր արդէն: Անշուշտ անօնց մէջ չեին պակսեր մարդիկ, որոնք կատարելապէս կարող էին աւելի գարշելի ոճիրներ գործելու, բայց ներկայ գործին մէջ անոնցմէ ո'չ մէկին գործելու եղանակը չեր տեսնէր:

Զիքակօ հասնելով, երկու մարդիկը ուղղակի փաստաբանին զրասենեակը գացին:

Թէյլըր, Քլիվէնտէն մեկնած պահուն, իր բարեկամին այրիին յայտնած էր որ չեր կրնար երկարել իր այցելութիւնը: Բայց դէպ ի Զիքակօ այդ ճամբորդութիւնը անհրաժշտ էր, վասն զի ամէն բանէ առաջ հարկ էր դանել հէք Մօրիսի սպանիչները:

Եւ յետոյ, գաղտնի ոստիկանը ապահոված էր զինք թէ

իր քննութիւնը քիչ ժամանակ պիտի տեսեր և թէ անմիջաւ-
պէս ետքը կրնար Թլիվլէնո դառնալ:

Թէյլըրի զրասենեակը կը բազկանար գրազիրներուն
վերասպահուած երեք սենեակներէն: Այս վերջինը բաւական
պզտիկ էր: Գողերուն խորտակած զրամարկզը պատուհանին
ծայրը կը դանուէր:

Բայց փականքը նորոգուած էր դողութենէն ի վեր և
զրէթէ չէր ներկայացներ այլ ևս ո՛ և է հետք այն մեանե-
րէն, զոր պատճառած էին զողերը:

Փինքէրթըր այս սենեակը կանոնաւոր քննութենէ մը
անցուց: Մասնաւորապէս տախտակամածը քննեց, բայց հոն
ալ կարելի չէր շահեկան բան մը գտնել, վասնզի սենեակը
45 օրէ ի վեր բնականաբար քանի մը անզամ մաքրուած էր:

Ժամէ մը աւելի էր որ այս քննութիւնը կը տեսեր, ա-
ռանց ամենափոքր արդիւնք մը ունենալու: Բայց Փինքէր-
թըրն վհատող մարդ չէր: Կը շարունակէր փնտուել յամառու-
թեամբ:

— Կառախումքին մէջ ըսիք ինծի թէ զրամարկզը քիչ
մը հեռացած էր պատէն, այնպէս չէ, հարցուց Փինքէրթըրն
փաստաբանին:

— Այս' :

— Լա՛ւ ուրեմն, մենք ալ մեր կարգին առաջ պիտի
քշենք զոյն:

Երկու մարդիկը դժուարաւ յաջողեցան քշել, վասն զի
զրամարկզը իսկատ ծանր էր:

Գաղտնի ոստիկանը խոշորացոյզ քննեց զրամակղին
յետնակողմը:

— Ճիշդ է, ըսաւ: Փականքը կոտրելէ առաջ, զողերը
փորձած են զրամարկզը ծակել ետեւի կողմէն, բայց տոկուն
և հաստ ըլլալուն համար ետ կեցած ըլլալու են: Այն ատեն
է որ...

Յանկարծ ընդմիջեց ու թեթև բացագանչութիւն մը
արձակեց: Կարձեալ ձեռք առաւ խոշորացոյզը և մասնաւոր
ինամքով մը քննեց զրամարկղին ետեւի կողմի մասը: Եւ
յաղթանակի ժողու մը անցաւ շրթունքին վրային:

Թէյլըր ինք բնաւ բան մը չէր տեսներ: Երբ գաղտնի
ոստիկանը շտկուեցաւ և խոշորացոյզը վար դրաւ ոփոփան-
քի հառաջով մը, փաստաբանը անոր նայեցաւ հետաքրք-
րուած դէմքով:

— Եղաւ լմացու, ձեռքիս մէջ է, ըսաւ Փինքէրթըրն:

Թէյլըր բառին բուն նշանակութեամբ առջեր մնացեր
էր: Գաղտնի ոստիկանին խոշորացոյզը առու և ինք աւ ա-
մենամեծ ինամքով քննեց այն տեղը, որուն ա՛յնչափ ու-
շաղրաւթիւն ընծայած էր Փինքէրթըրն քիչ առաջ:

Գաղտնի ոստիկանը անոր ըրածը կը դիտէր ժպտելով:

— Ի՛ ուրեմն, կը տեսնէ՞ք, հարցուց:

— Երաւ որ բնաւ բան մը չեմ տեսներ: Ծառ շատ կը
տեսնեմ քանի մը անորու և խառնակ հետքեր, որ չեմ գի-
տեր ինչ բանէ առաջ եկած են: Եթէ առոնք են...

— Ճիշդ այդ հետքերն են, Մր. Թէյլըր, որոնք հանե-
լուկին բանալին տօւին ինծի և ձեր զողին անունը յայտ-
նեցին:

Փաստաբանը գլուխը երերցուց:

— Զեմ հասկնար, ըսաւ: Ասոնք իմ ըմբանումէս վեր
բաներ են:

— Զեղ տեսնեմ, Մր. Թէյլըր, աղէկ դիտեցէք: Գրաւ
կը զնեմ որ ի վերջոյ պիտի նշմարէք թէ անորու և խառ-
նակ հետքեր անուանուածը իրականին մէջ ուրիշ բան չէ
բայց եթէ մտրդկային ձեռքի մը թողած դրոշմը:

— Զեռքի մը դրո՞շմը: Տէ՛ր Աստուած, այս', ի հարկին,
երեւակայութեան ուժով, կարելի է անոր մէջ գտնել բան
մը, որ տարտամ կերպով ձեռքի կը նմանի:

— Ամենեւին, ըսաւ գաղտնի ոստիկանը, ընդհակա-
ռակը շա՛տ որոշ և շա՛տ տեսանելի է: Զեռքը բաւական
խոշոր էր: Լայն մատանի մը կար ցուցամատին վրայ: Այդ
ձեռքին երրորդ մատը պական է:

Թէյլըր զարժանքէն ցնցուեցաւ և ապշտանար դէմքով մը
նայեցաւ Փինքէրթըրնի:

— Դուք այդ ամէնը սա մրոտումի՞ն մէջ կը տեսնէք,
ուր ես բան մը չեմ նշմարեր:

— Այս' :

— Ներեցք, բայց բան մը չեմ հասկնար այլես և չեմ զիտեր թէ ինչ ըսեմ: Քեզ կը մնայ որ զիտնաք թէ որո՞ւ կը պատկանի այդ ձեռքը, որուն մէկ մատը կը պակսի: Զեր կողմէ եղած ո՛չ մէկ բան այլես չի զարմացնէր դիս:

Փինքէրթըն սկսաւ ինդալ:

— Ինչպէս ըսիք, այդ ալ զիտեմ: Այս ձեռքը կը պատկանի խիստ վտանգաւոր անձի մը, որ սեւամորթ ֆրանց անոնով ճանչցուած է ոճրագործներու աշխարհին մէջ: Ես արդէն քանի մը անգամ հաշիւ կարգադրած եմ անոր հետև բանտը անցաւցած իր կեանքին առնուազն տասը տարիները ինծի կը պարտի:

Կարճահասակ փաստաբանը այնչափ չուարած էր որ պատասխանելիք խօսք մը չդատաւ: Այս բոլոր անակնկալ զիւտերը ապչութեան նմանող զարմանքի մը կը մտանէին զինքը:

— Կարելի՞ բան է որ, բսաւ, այդչափ բան կարդաք կիսովին ջնջուած սա դրոշմին մէջ:

— Այս', և այնչափ վստահ եմ բսածիս վրայ որ անմիջապէս նիւ եօրք պիտի երթամ:

— Նիւ ե՞օրք:

— Բայց այս', ես կրնամ իմ մարդս փնտուել նիւ եօրքի մէջ, քանի որ հոն իմ մտադրութեանս տակ ունիմ գործակալներու և աշխատակիցներու: Ուրեմն մնաք բարով, Մր. Թէյլը: Կը յուտամ թէ քիչ ատենէն պիտի կրնամ երկու մարդասպանները Քլիվլենտի բանտը առաջնորդել իմ ձեռքովս: Շուտով կը տեսնուինք նորէն:

Այս խօսքերը ըսելէ ետք, Փինքէրթըն զրասենեակին մեկնեցաւ կայարան երթալու և նիւ եօրքի առաջին հաստիումը նստելու համար:

ՕԴԻՆ ՄԷԶ ԶԵՐԲԱԿԱԼՈՒՄ ՄԸ



Նիւ եօրք դառնալուն պէս, գաղտնի ոստիկանը անմիջապէս հարկ եղած միջոցները ձեռք առած էր գործը հետապնդելու համար:

Բովանդակ Մ. Նահանգներուն մէջ ցրուած էր իր լաւագոյն գործակալներէն քսանը, որոնց մէջ կը գտնուէին իր երկու տեղակալները՝ Բէրիէ և Մօրիսօն:

Անոնցմէ իւրաքանչիւրը պաշտօն ունէր որոշեալ գաւառի մը վրայ հսկելու և օդապարիկի վերելք մը ծանուցուելուն պէս իմացնելով վարպետին:

Մասնաւորապէս պիտի ջանային փնտուել, հասկնալ թէ այդ օդանաւորդներուն մէջ պիտի զանուէր մէկը, որուն աջ ձեռքին երրորդ մատը պակաս էր:

Գաղտնի ոստիկանը չէր յուսար թէ Աւէսթըրլէնտ եղայլայները քիչ ատենէն նոր վերելքի մը ձեռնարկին: Սակայն զրամի պէտքը կրնար մզել զիրենք նոր հարուած մը փորձելու, որ քիչ մնաց յաջողէր Քլիվլէնտի մէջ:

Այս վերջին ենթագրութիւնը իրականացաւ:

Արդարեւ, ութ օր ետքը, Փինքէրթըն Աթլանթայի քոտակայ փոքր քաղաքէ մը կ'ատանար Մօրիսոնի զրկած մէկ հետազիրը, որ սապէս խմբագրուած էր:

«Վաղը չէ միւս օր օդապարիկի վերելք մը տեղի պիտի ունենայ այստեղ: Օդանաւորդը կը կոչուի ֆրանցի: Հետը աօնական մը ունի: Շարունակ մորթէ ձեռնոցներ կը կրէ, «զորս բնաւ չի հաներ:»

ՄՈՐԻՍՈՆ»:

— Անոնք են, բսաւ զաղանի ոստիկանը ինքնիրէն: Նոյց օրը մեկնեցաւ պէտ Աթլանթա: Համոզուած էր թէ ապահով հետքը գտած էր:

Դիւրին էր հասկնալ թէ այդ ֆրանցին ինչո՞ւ ձեռնոցները չէր հաներ բնաւ: Չէր ուզեր ցոյց տալ որ ձեռքին մէկ մատը պակաս էր: Արդ, ձեռնոցին տակ, երրորդ մատը ճարտարօրէն լեցնելով, ո՛չ ոք կրնար բանէ մը կտսկածիլ:

Աթլանթայի ճեպընթացը, ցաւալի պարագաներու բերմամբ, բաւական կարեւոր յապազում մը կրեց, այնպէս որ Փինքէրթըն իր մեկնումին երկրորդ օրուան առտուն միայն հասաւ հոն:

Վերելքը տեղի ունենալիք փոքր քաղաքին մէջ երկաթօւզի չկար, այնպէս որ գաղտնի ոստիկանէ հարկագրուեցաւ կառք մը նստիլ այդ քաղաքը երթալու համար:

Կառքին մէջ նստելու պահուն, ձիւոր մը կայարան կը հասնէր սրարշաւ: Գաղտնի ոստիկանը նշմարելով, ուրախութեան և զարմանքի աղաղակ մը արձակեց:

— Դո՞ւք էք, վարպետ, բսաւ: Ա՛հ, ի՞նչ երջանկութիւն: Ճիշդ ժամանակին հասաք: Վերելքը տեղի պիտի ունենայ երկու ժամէն: Արդէն օդապարիկը ուսեցնելու վրայ են:

Մօրիսոն էր որ վարպետին գալը չտեսնելուն վրայ մասհոգուելով, մինչ վերելքի պատրաստութիւնները հետզ-

հետէ կը յառաջանային, ձի նստած և մինչեւ կայարան վագած էր սանձարձակ:

Մօրիսոն մեծ վարանումի մէջ էր: Եթէ վարպետը չի գար, ի՞նչ ընկլու էր: Օդանաւորդը, որ ժամանակէ մը ի վեր փոքր քաղաքին մէջ կը բնակէր արդէն, ժողովուրդին սիրելին եղած էր:

Բնակիչներէն շատեր օդապարիկով վերելք տեսած չէին բնաւ: Աւստի անհամբեր կ'սպասէին օդապարիկին մեկնելուն:

Մօրիսոն այս կացութիւնը վարպետին հասկցուց քանի մը բառով:

— Այս կառքով հոն երթալու համար ո՞րչափ ժամանակ պէտք է, հարցուց Փինքէրթըն իր տեղեկալին:

— Առնուազն երկու ժամ:

Դադտնի ստիկանը կառապանին դարձաւ:

— Ինձէ նայեցէք, բարեկամ, ըսաւ անոր, այս ճամբորդութեան հակար տասը տոլար պահանջեցիք ինձմէ: Է՛ուրեմն, ոչ թէ տասը, այլ հարիւր տոլար պիտի տամ եթէ միայն մէկուկէս ժամէն հասցնէք զիս:

Լայն ժամիս մը ճառագայթեց կառապանին դէմքին վրայ:

— Կրցածս պիտի ընեմ, ըսաւ, և եթէ ձիերէն մէկը ճաթեցնեմ...

— Փոխարժէքը պիտի տամ, խոստացաւ Փինքէրթըն:

Եւ հիմա ճամբար ելէք:

Զիերը մեկնեցան արտակարգ գնացքով մը:

— Հիմա ժամանակ ունինք, ըսաւ Փինքէրթըն: Դիտցածներդ պատմէ առանց մանրամասնութիւն մը զանց ընելու:

Մօրիսոն հնազանդեցաւ:

Իմանալուս պէս որ վերելք մը տեղի պիտի ունենայ, այսինքն նախընթաց օր, հետազիր մը զրկեցի ձեզի: Պէտք է ըսես թէ մեր երթալիք քաղաքին բնակիչները տեսակ մը ժողովրդային հանդէս կամ բանայիր կը նկատեն այս վերելքը: Տօնավաճառի յատուկ խանութներ շինուած են այն տեղւոյն վրայ, ուրիշ ողեալ բարձրանայ օդապարիկը: Այս առտուընէ իվեր երաժշտախումբ մը շարունակ կը նուազէ: Դարոցները արձակուրդ ունին և շատ զործաւորներ իրենց աշխատութիւնը դադրեցուցած են, այդքան հազուագէպ տեսարան մը չփափցնելու համար:

— Այս՝ ըսաւ Փինքէրթըն, ասիկա մեծ դէպք մըն է այդ մարդոց համար, որոնք տակաւին տեսակ մը գերբնա-

կան երեւոյթ կը նկատեն օդապարիկ մը: Այս պայմաններուն մէջ պէտք չէ ծածկել թէ մեկնումէն առաջ ձերբակալութիւն մը ծանր վանդակներ կը ներկայացնէ, վասն զի բազմութիւնը, զրկուելով այն տեսարանէն, որուն վրա դած է իր յոյսը, կրնայ զայրանալ: Ո՞վ գիտէ ի՞նչ ծայրայեղութիւններ պիտի գործէ եթէ իր աշքին առջեւ տարուի այդ մրանցին, զոր տեսակ մը հերոս կը նկատէ: Փոքր քաղաքին ոստիկանները անշուշտ շատւոր չեն: Ամէն պարագայի մէջ անբաւական են մոլիգնաց բազմութեան մը գիմադրելու:

— Երաւուք ունիք, Մր, Փինքէրթըն: Բայց այն ատեն ի՞նչպէս պիտի ընէք այդ երկու տպիրատները ձերբակալելու համար: Անգամ մը որ օդապարիկը մեկնի և մարդիկը օդին մէջ բարձրանան, այլ եւս բան մը չենք կրնար ընել անոնց դէմ:

— Ես բնաւ այդ կարծիքէն չեմ: Կրնաս վստահ ըԱպէ թէ անպատճառ պիտի ձերբակալենք զիրենք:

— Բայց ի՞նչպէս, ի՞նչպէս:

— Նատ պարզ է: Անոնց հետ վերելք պիտի կատարեմ և բարձրանալէս ետք պիտի ձերբակալմ զիրենք:

Մօրիսոն դէմքը սոսկալի կերպով ծամածուեց:

— Աստուծոյ սիրուն, վարպետ, այդպիսի բան մը միտքէ մի անցընէք, պոռաց: Գիտէ՞ք թէ ի՞նչ սոսկալի վտանգի մը կ'ենթարկէք ինքինքնիդ: Վեր ելեւնուդ պէս, մահը ձեր տակն է...

Փինքէրթըն ժպտեցաւ:

— Սիրելի Մօրիսոնս, ըսաւ, ես արդէն շատ աւելի վտանգաւոր կացութիւններու մէջ գանուած և միշտ ողջ գուրս ելուծ եմ: Նատ ողորմելի սոսկան մը եղած պիտի ըԱպայի եթէ ընկրկէի վտանգին առջև, ի՞նչ ձեւի տակ աւ որ ներկայանայ: Եւ յետոյ, ներկայ պարագային մէջ, իսկ կապէս կ'ուզեմ որ այդ չարագործները բանեմ իրենց ոճիրը գործուծ պահուն: Այս քաղաքին մէջ օթօօպիլ մը կայ:

— Այս՝ կայ և կը պատկանի հարուստ ըլէնմիի, զոր օդանաւորդները խիստ հաւանաբար ընտրած են իրեն զոհ:

— Հոս կուգանք ուրիշ կէտի մը, որուն վրայ հարցում պիտի ընէի քեզի: Բայց նախ ըսածնիս աւարտենք: Քաղաք հասնելնուս պէս, ըլէվնիի տունը կ'երթաս, օթօմոպիլը պատրասնել կուտաս, մէջը կը նստիս և կը նետելիս օդապարիկին: Արդարեւ մտադիր չեմ երկար ատեն օդին մէջ, այլ զբէթէ անմիջապէս վար պիտի իջնեմ:

— Կա՛ւ, դիւրին է, վասնզի Բէքնի օթօմիպիլի կարտաղի սիրահար մըն է, որ ամբողջ օրը կը պտահ քաղաքին մէջ։ Իր օթօմօպիլ ապահովապէս վերելքի տեղւոյն մօռը պիտի ըլլայ, մեկնելու կազմ ու պատրաստ, եթէ սակայն նոյն իսկ տեղւոյն վրայ չէ։

— Աղե՛կ։ Այս քաղաքին մէջ զիտցող կա՞յ թէ վերջերա-
ռապահարկի մը միջոցաւ ոճիր մը գործուած է ԲԱՎԵԼԵՆ-
տի մէջ։

— Շատ հազուադէալ կերպով լսած եմ անոր խօսքը։
Փիտցողները անշուշտ շատ քիչ են։ Ամէն պարագայի մէջ
վայրկեան մը իսկ մտքէ անցուցած չեն թէ կրնայ առնչու-
թիւն մը գտնուած ըլլալ երկու ռւէսթըրլէնտներուն և օդա-
նաւորդ թրանցիի ու իր ընկերոջը միջեւ։

— Ատիկան գիւրին էր գուշակել։ Եւ հիմա բացատրէ
թէ ինչէ՞ն կ'ենթադրես որ այս չարագործները Փէննին
ընտրած ըլլալու են իբրեւ իրենց նոր զոհը։

— Ահաւասիկ, Փէննի քաղաքին ամէնէն հարուստ
մարդն է: Երկու միլիոն տոլյարի չափ դրամ ունի: Բաւա-
կան գէր է: Կարմրցած և ուռած դէմք մը ունի, բաւական
ապուշ երեւոյթով մը: Համակրելի մէկը չէ, վասն զի շատ
կը սիրէ իր հարսութիւնը ցուցագրել: Այսպէս, երկու
ձեռքերուն բոլոր մատներուն վրայ թանկագին քարերով
ընդելուզուած մատանիներ ունի: Ասկէ զատ, շարունակ իր
վրայ կը կրէ պանքտոմերով առատօրէն լեցուած դրամա-
պանակ մը, զոր կը ցուցնէ ամէն առթիւ և մանաւանդ
առանց առիթի սպասելու: Մէկ խօսքով, կը կարծէ թէ
քաղաքին և նոյնիսկ բովանդակ աշխարհի ամէնէն կարեւոր
անձն է: Երբ օդանաւոր Ֆրանցի հոս եկաւ, զրեթէ ամբող-
ջովին վրաւեց զայն: Իր տանը մէջ հիւրընկալեց և ամէն
օր միասին դուրս կ ելլեն:

— Այսուհետեւ առաջ կ գովազնի մասին պարագաներուն մէջ՝
առաջ ըստ Փինքէրթըն, այդ պարագաներուն համար: Մարդ
անիկա որս մըն է այդ երկու աւագակներուն համար: Մարդ
մը, որ դոհաբեղէններու վաճառաշուն մը և լիցուն դրա-
մապանակ մը կը կրէ իր վրայ և ասոր հետ մէկտեղ խելքէ
պակսութիւն աւ ունի, լաւագոյն որս մը կրնայ ըլլալ:
Ասկէ աւելի աղէկը չէին կրնար գտնել: Օ՞ն, կառապա՛ն,
չո՞ւտ, չո՞ւտ:

Կառապանը կը մտլակէր ձիերը և կառքը վը չարուա-
կէր սուրալ դժոխային գնացքով մը :
Բլուրի մը վրայ հասած էին :
Հեռուէն կը նշմարուէին պղտիկ ցած տուներու տա-

Նիշանը կազմութեած է առաջին պատճեան գործութեան վեհական մասունք և առաջին պատճեան գործութեան առաջին պատճեան մասունք է:

Փինքէրթըն դիտակը առաւ և ուշադրութեամբ զննեց։

— Զար սատանայ, պոռաց, Գրեթէ ամբողջօվին ու
ած է: Աճապարելու է: Խենթենալը լան մը չէ եթէ ժառ
մանակին չհասնինք և տեսնենք որ այդ երկու աւազակ-
ները մեր աշքին առջեւ օդին մէջ բարձրացնեն իրենց տա-
րաբախտ զոհք:

Պարագան կ'ը ։ Գաղտնի ուստիկանը ինք ձեռք տառ սահմերը և մըտ-
պազմնի ուստիկանը ինք ձեռք տառ սահմերը և մըտ-
պազմնի ուստիկանը ինք ձեռք տառ սահմերը էին, նե-
րակը : Զիերը՝ որոնք փրփուքներէն ճերմկցած էին, նե-
րակը պէս կը սլանային :

Օղապարիկը, հովէն թեթեւապէս մզուելով, թուլօրէն կ'երերար, քանի մը պարաներու միջոցաւ գետնին կապ- ուած ըլլալով:

— բազմութեան մէջ յուզումը իր ծայրայեղ աստիճանին հասած էր:

— Ճամբայ պիտի ելլեն, ճամբայ պիտի ելլեն ու, Կը պոռացին բոլոր հանդիտականները, հիացմամբ դիսելով հըսկայացին բունքը, որ քիչ մը ետքը պիտի ուշանար օգին մէջ:

Մօրիան անմիջապէս վազեց Ալեքսանդր օթօսաւը և առ հետո ածած ուրար նշարած էր:

Պրուն քիչ մը հեռուն կեցած ըլլալը սշամբու էր
Գալով Փինքէրթընի, անիկա թեւերը և արմաւկնիր
զործածելով ձամբայ մը կը բանար բաղմութեան մէջէն
Մերթ կը ծաէր և մարդոց սրունքներուն մէջէն կը սպրդէ
կ'անցնէր և մերթ աջ ու ձախ կոռոփի հարուածներ տալո
իր ձամբուն վրայ գանուող հանդիսատեսները մէկդի կ'ընէր

Փինքէրթըն կը շարունակէր յառաջանալ տռանց բնելու անէծքները, որոնցմով կ'ըսդունէին զինք և նոյնի պատճառացայտ կռունկները, որնք կը բարձրանային վրայ:

վրայ : Վերջապէս սիոփանքի հառաջ մը արձակեց : Հասդրամ
աեմներու առաջին շարքին վրայ հասած էր :

Թբանցի, սեւ մազերով խոշոր մարդ ու, լի բարեկած էտած նստած էք արդյէն նաւակին մէջ:

Այդ ընկերը բացարձակապէս անպնդ անօրինակ

և կը լրահուէր Բլէննին, որ Ֆրանցիի հետ խօսելու վրայ էր:

Փինքէրթըն անմիջապէս նշմարեց որ միլիոնատէրին մասին Մօրիսոնի ըրած նկարագրութիւնը չսփազանցուած էր:

Երեք մարդիկը այսպէս արագ կերպով քննելէ ետք, ուշագրութիւնը կեղրոնացուց պարանին վրայ, որուն մէկ ծայրը կապուած էր նաւակին տակէն: Մէջտեղի մասը գետնին վրայ էր, ճիշդ Փինքըրթընի ոտքերուն տակ: Գալով միւս ծայրին, խիստ որոշապէս տեսաւ թէ անիկա նաւակին եղերքին վրայ կախուած և անոր մէջ ինկած էր:

Անշուշտ այդ ծայրին վրայ կը գտնուէր հանդոյցը:

— Ամէն բան պատրաստ է, հարցուց Ֆրանցիի ընկերը ձայնով մը, որ յուղումէն կը դողար:

Այդ միջոցին գաղտնի ոստիկանը քայլ մը տռաւ և իր ոտքերուն առջեւ տարածուած պարանին վրայ սայթաքեցաւ, որպէս թէ տեսած չըլլար զայն:

Ինկաւ և ձախաւեր չուանին մէջէն ուղերը աղատելու ձեւ ընելով մէկտեղ, զրեթէ ամբողջովին կորեց զայն ածելիի մը պէս սուր դանակով մը, զոր ձեռքին մէջ պոտհած էր: Չուանը քանի մը թելերով միայն կապուած էր և անոնք ալ թեթեւօրէն քաշուենուն պէս պիտի խզուէին:

Անմիջապէս ոտքի ելաւ: Միջոդէով զրեթէ աննշմար անցած էր:

Փլէննի Ֆրանցիի ձեռքը սեղմելու վրայ էր:

— Բարի ճամբորդութիւն, Տեա՛րք, կ'ըսէր: Ուրեմն օրոշուած է, այնպէս չէ: Ուր որ իջնէք, նեռագիր մը զրկեցէք ինձի և ես անմիջապէս օթօմօպիլովս կուզամ ձեղ առնելու:

— Այս', այդպէս պիտի ընկենք: Ամէն բան պատրաստ է:

— Այս', պատասխանեցին չուանները բռնող մարդիկը:

— Օ՞ն ուրեմն, մէ՛կ, երկու, երե՛ք: Յողուցէ՛ք:

Բազմութիւնը. որ հետզհետէ ջղայնացած էր, աղաղակ մը արձակեց:

Մարդիկը թողուցին չուանները և նոյն պահուն Ֆրանցի պարոնին հանդոյցը նետեց նաւակին մօտ կեցող Փլէննի վիզին չուրջ: Եւ որպէս զի մինչեւ իրենց քով բարձրացու վիզին չուրջ: Եւ որպէս զի մինչեւ իրենց քով բարձրացու վիզին չուրջ:

Միլիոնատէրը, յանկարծ զգալով որ օդապարիկը գետնէն կը վերցնէր զինք, սոսկալի ճիշ մը արձակեց: Բայց

զրեթէ նոյն վայրկեանին Փինքէրթընի կողմէ կտրատուած չուանը խզուեցաւ և Փլէննի ինկաւ բազմութեան մէջտեղը:

Փութացին զինքը չնչանեղձ ընող հանդոյցը վիզէն հանել:

Գալով երկու օդանաւորդներուն, անոնք ալ իրենց կարգին անակնկալի մը եկած էին, որուն անշուշտ չէին սպասեր բնաւ:

«Յողուցէ՛ք» հրամանը տրուած միջոցին Փինքէրթըն օդապարիկին մօտ վազած և կառչած էր նաւակին եղրին, որուն հետ բարձրացաւ օդին մէջ:

Այս ամէնը տեղի ունեցած էին պատմելու համար պէտք եղածէն չատ աւելի քիչ ժամանակի մը մէջ:

Քանի մը բոպէ եաքը, Փինքէրթըն երկու օդանաւորդներուն հետ կը ուաւանէք գետնէն քանի մը հարիւր մէդը վեր: Պահած էր նոյն հանդարտութիւնը և անայլայլ պաղարիւութիւնը, զոր պիտի ունենար, եթէ սալօնի մը մէջ խօսելու վրայ ըլլար:

— Կը ներէ՛ք, տեա՛րք, ըստ հանդարտորէն: Թերեւս քիչ մը անպատշաճ կը գտնէք իմ ընթացքս, բայց զիտէ՛ք շատ կը փափաքէի մասնակցիլ այս պղտիկ արշաւանքին:

Երկու չարագործները, արսափէն ջլատուած, զաղանի ոստիկանին կը նայէին ողպէս թէ անիկա յանկարծ միւս աշխարհէն դուրս ելած ըլլար:

Փինքէրթըն ճարտար շարժուձեւով մը ելաւ նաւակին եղերքին վրայ և պահ մը ետք թշուառականներուն զէմը կը ցցուէր:

— Փինքէրթըն, պոռաց Ֆրանցի:

— Ա՛ն, ա՛ն, սիրելի Ֆրանցս, ուրիշ անունով Ռեկութընտ, ուրիշ անունով մըն ալ Ֆրանցի, հաճոյքով կը թրպէնտ, ուրիշ անունով մըն ալ Ֆրանցի, հաճոյքով կը տեսնեմ թէ կը ճանչնա՛ք զիս: Աւելի՛ աղէկ, աւելի՛ աղէկ: Արդէն առաջին անգամ չէ որ կը հանդիպինք իրարու: Միայն թէ այս անգամ մեր հանդիպումը աւելի սուզի պիտի նստի ձեզի:

Ֆրանցի ընկերը սոսկալի հայհոյութիւն մը ըրաւ և ձեռքը զրպանին տարաւ:

Բայց այս շարժումը աւարտելու ժամանակ ունեցած էր երբ գաղտնի ոստիկանին թեւը իջաւ զանկին վրայ թշուառականին, որ գեղեւելով նահանջեց:

Զանաց պարաններուն կառչիլ, բայց ձեռքերը պարտ պութեան հանդիպեցան: Նաւակին եղերքին վրայէն մէկ կողմին վրայ ծրեցաւ և վար ինկաւ:

Փինքէնթը լսեց բազմութեան արձակած աղաղակը:

— Եւ հիմա, սիրելիս Ֆրանց, բաւլ Փինքէրթըն օվանաւորդին, կափարիչը բանալու հաճոյքը պատճառեցէք ինձի: Վար պիտի իշնենք:

Ֆրանց, կատաղութիւնով արբշիս, ակռաները կը կըրճտէր: Ասելավառ ակնարկ մը սեւեսեց գաղտնի ոստիկանին վրայ և չարամտութեամբ ձեռքը երկնցուց դէպ ի խզումի չուանը, որու միջոցաւ կարելի է պատռել օդապարիկին պատեանը և վայրկեանի մը մէջ պարպել անոր պարունակած ամբողջ կազը: Ասիկա յանդուգն գործ մրն է, որուն բնականաբար յուսահատական պարպաներու մէջ միայն կը դիմուի երբ օդապարիկը չատ մօտ է գետնին և երբ ուժգին հով մը կը քաշէ զայն հողին վրայ: Բայց այս բարձրութեան մէջ այդ չուանին զործածութիւնը առաջ պիտի բերէր զարհուրելի անկում մը, որմէ ողջ պիտի չազատէին ո՛չ Ֆրանց և ո՛չ Փինքէրթըն:

Բարեբախտաբար վաբանուր գուշակեց թշուառականին մտադրութիւնը: Առանց վարանելու, զրպանէն երկաթեայ կարճ ձող մը հանեց և կրկնակի հարուածներով զարկաւ Ֆրանցի, որ իսկոյն նաւակին մէջ ինկաւ զզայազիրկ:

Յետոյ ինք կափարիչը բացաւ և օդապարիկը սկսաւ դանդաղօրէն իջնել, մինչ գաղտնի ոստիկանը ուժով մը կը կապէր իր կալանաւորը:

Վայրէջքը տեղի ունեցաւ առանց դժուարութեան: Օդապարիկը բարձրացած տեղէն իբր մէկ մզոն հեռու իջաւ և բռնուեցաւ Մօրիսոնի կողմէ, որ Փլէննի օթօմօպիլովը վազած եկած էր քանի մը ոստիկաններու հետ:

Փինքէրթըն ինք անձամբ Քլիվլէնտ տարաւ Ֆրանցը: Երեք շաբաթ վերջ թշուառականը մահուան դատապարտուած և գլխատուած էր:

Հետեւաբար Տիկին ելլինը Մօրիս գոնէ իր տարաբախաւ ամուսնոյն մահուան վրէժը լուծուած տեսնելու մխիթարութիւնը ունեցաւ:

Երկու տարի՝ ետք, անիկա կ'ամուսնանար վաստաբան Թէյլըրի հետ, որ երկու աւաղակներուն զոհին ամէնէն հաւատարիմ բարեկամը եղած էր:

ՎԵՐՋ

910

ՀՀ Ազգային գրադարան



NL1007227 7

ՀՀ Ազգային գրադարան



NL1007226 6

ՀՀ Ազգային գրադարան



NL1007225 5

ՀՀ Ազգային գրադարան



NL1007224 4

ՀՀ Ազգային գրադարան



NL1007223 3

ՀՀ Ազգային գրադարան



NL1007017 2

ՀՀ Ազգային գրադարան



NL0933053 1

ՀՀ Ազգային գրադարան



NL1007234 14

ՀՀ Ազգային գրադարան



NL1007233 13

ՀՀ Ազգային գրադարան



NL1007232 12

ՀՀ Ազգային գրադարան



NL1007231 11

ՀՀ Ազգային գրադարան



NL1007230 10

ՀՀ Ազգային գրադարան



NL1007229 9

ՀՀ Ազգային գրադարան



NL1007228 8

ՀՀ Ազգային գրադարան



NL1007238 18

ՀՀ Ազգային գրադարան



NL1007237 17

ՀՀ Ազգային գրադարան




NL1007236 16

ՀՀ Ազգային գրադարան



NL1007235 15

ՀՀ Ազգային գրադարան




NL1007241 21

ՀՀ Ազգային գրադարան



NL1007240 20

ՀՀ Ազգային գրադարան



NL1007239 19

